ԱՐՄԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Է. ԺԻԼՍՈՆԻ ՆԵՈԹՈՄԻՍՏԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ. ՀԱՎԱՏ ԵՎ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

Միջնադարի թողած հարուստ գիտական ժառանգությունը, ինչպես հայտնի է, եվրոպական մշակույթի կողմից գնահատվեց ոչ միանշանակ: Վերածննդի ժամանակներից սկսած՝ արևմտյան քաղաքակրթության զարգացման բազմադարյան այդ շրջանը գնահատվեց որպես «բարբարոսական» և «բոլորովին» անպետք ժամանակաշրջան:

Վերածննդի հումանիստներն իրենց անքերի լատիներենը, որը հիմնված էր հին աշխարհի դասական գրականության օրինակների վրա, հակադրում էին միջնադարյան սխոլաստների «բարբարոսական» լեզվին: Համալսարանական գիտական ժառանգությունը համարվեց աբստրակտ հասկացությունների մասին անիմաստ վիճաբանություն, որը չէր առնչվում ոչ հերոսությանը, ոչ մարդկային արժանապատվությանը, ոչ էլ նպաստում էր մարդու զարգացմանն ու կատարելագործմանը, այլ, ընդհակառակը, ծանրաբեռնում էր մարդու բանականությունը դոգմատիկական դրույթներով:

Հումանիզմի դրսևորում էր համարվում անպետք գիտելիքներից ու անիմաստ աստվածաբանական ուսումնասիրություններից մարդու ազատագրումը՝ բացելով նրա առաջ ստեղծագործական և ինքնուրույն մտածողության ճանապարհ:

17-րդ դարը Արևմտյան Եվրոպայում բնութագրվում է հասարակության մեջ բուրժուական հարաբերությունների ինտենսիվ զարգացմամբ: Կապիտալիզմի պահանջներն արմատապես փոխեցին մարդկանց վերաբերմունքը գիտության նկատմամբ և ընդհանրապես մարդկային ճանաչողության նպատակների և նշանակության նկատմամբ:

Եթե միջնադարում մարդկային բանականության ջանքերն ուղղվում էին Աստծո գոյության հիմնավորմանն ու Նրա ստեղծագործության վեհության ապացուցմանը, ապա աճող կապիտալիզմի դարում գիտությունն ու նրա գործիքը՝ բանականությունը, դիտվում էին իբրև օգտակար միջոցներ աշխարհի ճանաչողության ու նրա վերափոխման համար: Համարվում էր, որ Միջնադարն այն ժամանակաշրջանն է, որը դուրս է մնացել եվրոպական ոգու կայացման միասնական պատմական ուղուց:[1]

Աստիճանաբար 17-րդ և 18-րդ դդ. ընթացքում սկսում են ավելի ու ավելի քիչ ուշադրության արժանանալ նաև սխոլաստ հեղինակները: Սկսվում է

[1] Радугин А. А. Философия. Курс лекций. М. 2004, с.100.

սխոլաստիկայի անկումը: Ուսումնական հաստատություններում տիրում է այն կարծիքը, որ անհրաժեշտ է ուսուցման նոր համակարգ, բայց այն սխոլաստիկայի հիմքի վրա և նրա շուրջ կառուցելու փոխարեն գերադասվեց հրաժարում նրանից:

Հիմնական պատճառները, որոնք հանգեցրին այս փոփոխությունների, հանդիսացան բողոքականությունը, հումանիզմը, բնության ուսումնասիրությունը և Ֆրանսիական հեղափոխությունը: Կոպեռնիկոսի, Կիպլեռի,Գալիլեյի և Նյուտոնի բացահայտումները սխոլաստների կողմից ընդունվեցին ոչ միանշանակ: Բոլոր սխոլաստների, այդ թվում նաև Թ. Աքվինացու նկատմամբ դրսևորվում էր քամահրական վերաբերմունք: Եվ, վերջապես, թոմիզմին մեծ հարված հասցրեց Ֆրանսիական հեղափոխությունը,որից այն ուշքի եկավ միայն 19-րդ վերջին:Եվ հենց այս շրջանում էլ դրսևորվեց Միջնադարյան մշակույթի նոր ըմբռնումը, երբ ձևավորվեց նեոսխոլաստիկայի հզոր ուղղություններից մեկը՝ նեոթոմիզմը,որն էլ հանդիսանում է թոմիզմի ժամանակակից դրսևորումը:[2]

Թոմիզմի ծնունդը նշանավորվեց Լևոն XIII պապի 1879թ. («Aeterni Patris»-«Հավիտենական Հորը») շրջաբերականով,որը սկսվում էր հետևյալ խորագրով.«Կաթոլիկյան դպրոցներում փիլիսոփայության հրեշտակային դոկտոր ս. Թ. Աքվինացու ոգով քրիստոնեական փիլիսոփայությունը վերականգնելու նպատակով»:

Այս փաստաթուղթը, որը զգալի ազդեցություն ունեցավ կաթոլիկության հոգևոր արժեքների փոփոխության հարցում,դարձավ վճռական գործոն նեոթոմիզմի՝ որպես Հռոմեական եկեղեցու գլխավոր աստվածաբանական համակարգի ձևավորման հարցում:

Եվրոպական աշխարհի ավանդական արժեքների ճգնաժամի պայմաններում վերադարձը Թ. Աքվինացու աստվածաբանական ուսմունքին կաթոլիկ հոգևորականները համարում էին փրկության միակ միջոց բանականության ու հավատի միջև ներդաշնակություն պահպանելու հարցում: Հակասական իրականության հետ հաշտությունը նրանց հնարավոր էր թվում միայն միջնադարյան իդեալների ու սկզբունքների վերաարժևորման պայմաններում:

Թոմիզմի հայտնի ներկայացուցիչներից է ականավոր կրոնական փիլիսոփա է. Ժիլսոնը (1884-1978):Նրա ընդարձակ ստեղծագործական ժառանգության մեջ զգալի տեղ է հատկացված եվրոպական փիլիսոփայության պատմությանը, որտեղ անցյալի մտածողների ստեղծագործությունների մանրակրկիտ վերլուծությունը զուգակցվում է թոմիզմին՝ իբրև քրիստոնեական փիլիսոփայական դոկտրինի ծառայության և Թ. Աքվինացու՝ եվրոպական մտքի զարգացման մեջ ունեցած ներդրումների բացահայտման հետ:

---

[2] http://www.epistemelinks.com/pers/AquiPers.htm;

է. Ժիլսոնի և նեոսխոլաստիկայի դերն այս պարագայում հանդիսանում էր ավանդությունը պահպանելն ու այն զգուշորեն «փոխադրելը»: Ինչպես նեոթոմիստներից և ոչ մեկը, է.Ժիլսոնը նախ և առաջ հետազոտող էր, բայց դրանով հանդերձ ստեղծագործաբար յուրացնում էր միջնադարյան մետաֆիզիկայի ամբողջ ժառանգությունը՝ ոչ թե պարզապես կրկնելով Թ. Աքվինացուն, Դ. Սկոտին կամ Օգոստինոսին, այլ բացահայտելով նրանց աստվածաբանական համակարգերին բնորոշ իմաստն ու նշանակությունը՝ տալիս նրանց նոր հաճախ նույնիսկ անսպասելի, բայց միշտ հիմնավորված մեկնաբանություններ՝ համատեղելով յուրօրինակությունը խորը պատմական գիտելիքների և Միջնադարի խոշորագույն աստվածաբանների նկատմամբ ունեցած պատկառանքի հետ: Նա ձգտում էր գտնել նոր ուղիներ՝ չարհամարհելով հները, որոնք ձևավորվել էին միջնադարյան մշակույթի և աստվածաբանության շրջանակներում:

Երկխոսության մեջ մտնելով անցյալի մտածողների հետ՝ ձգտում էր գտնել ժամանակակից խնդիրների լուծման հեռանկարներ՝ քաջ գիտակցելով, որ առաջընթացը, մշակույթի ձևավորումը ներկայում անհնարին կլինի առանց անցյալի փորձը գնահատելու:

է. Ժիլսոնն իր գլխավոր հետազոտական խնդիրն էր համարում ճշմարտության պահպանումը փոփոխական աշխարհում, քանզի համարում էր, որ ճշմարտությունը չի կարող անհետանալ մոռացության գետի մեջ, այլապես այն չէր լինի ճշմարտություն: Ճշմարտությունը ծնվում է ոչ միայն փիլիսոփայական պաթոսի տանջալից փնտրտուքներում, այլ նաև ժառանգվում է գրասենյակային լռության մեջ՝ մտքի պատմության վերլուծության ընթացքում:

Թոմիզմը դարձավ այն ելակետը,որը թույլ տվեց նրան գտնել ներքին հաշտեցում հավատի և բանականության միջև, հաղթահարել սեփական փիլիսոփայական որոնումների և քրիստոնեական համոզմունքների միջև եղած անջրպետը: Թեպետ է. Ժիլսոնը պնդում էր, որ նրա համար իր հոգևոր կայացման գործում զգալի դեր են խաղացել երեք խոշորագույն մտածողներ՝ Ա. Բերգսոնը, Արիստոտելը և Թ. Աքվինացին, ընդ որում վերջինս նրա համար հատկապես թանկ էր, նրա հետաքրքրությունները չէին սահմանափակվում միայն Միջնադարի շրջանակներում, նրա ուշադրությունը կենտրոնացած էր եվրոպական մտքի ամբողջ պատմության վրա, իսկ ուղին դեպի նեոթոմիզմ սահմանվեց երկար ու դժվարին որոնումների արդյունքում:

Փիլիսոփայության և հավատի է. Ժիլսոնի հայեցակարգը

«Թոմիզմ. Թ. Աքվինացու փիլիսոփայության ներածություն» աշխատության մեջ, որը հանդիսանում է է. Ժիլսոնի կարևորագույն աշխատություններից մեկը, հեղինակը ներկայացնում է Թ. Աքվինացու փիլիսոփայության հիմնական

հասկացությունները՝ փորձելով ցույց տալ թոմիզմի անանց արժեքը եվրոպական քաղաքակրթության համար և նրա արդիականությունը նաև այսօր:

Այստեղ է. Ժիլսոնը նշում է, որ թեպետ Աքվինացու ուսմունքն ունի բացառապես աստվածաբանական բնույթ, բայց պետք է անխուսափելիորեն արձանագրել նաև այն, որ նրա աստվածաբանությունն ըստ էության իր մեջ ներառում է ոչ միայն փաստացի, այլև խիստ ռացիոնալ փիլիսոփայություն: Նյութի շարադրման հարցում, ինչպես նշում է է. Ժիլսոնն իր առաջաբանում, նա հետևել է Աքվինացու կողմից երաշխավորված շարադրման միակ կարգին, այն է՝ աստվածաբանական կարգին: «Նույնիսկ փիլիսոփայելիս, - գրում է է. Ժիլսոնը,- նա աստվածաբանում է»:[3] Աքվինացին իրեն իրավունք է վերապահում երկխոսության մեջ մտնել փիլիսոփաների հետ և դատողություններ անել իբրև փիլիսոփա միայն այն դեպքում, երբ նրա հետևությունները կախման մեջ չեն գտնվում հավատից:

Վերը նշված աշխատության մեջ է.Ժիլսոնն իր ուսումնասիրության գլխավոր առարկան է համարում Թ. Աքվինացու փիլիսոփայական հայացքների ուսումնասիրությունը, որոնք վերջինս ծառայեցրել է աստվածաբանությանը:

Թ. Աքվինացի անհատի կարևորագույն բաղադրիչը, այն կերպարը, որում նա հավանական է պատկերացրել է ինք իրեն, Դոկտորի կերպարն է: Ինքը՝ Աքվինացին, Իրենհոսի նման հայտարարում է, որ իր կյանքի կարևորագույն խնդիրը համարում է Աստծո մասին խոսելը: Սեփական դերի մասին Աքվինացու մոտեցումները վերլուծության ենթարկելով՝ բացահայտում ենք աստվածաբանին ծառայող փիլիսոփայի: Ինչպես նշում է ինքը՝ Աքվինացին, վանականը կարող է հավակնել ուսուցչի կոչմանն ու ֆունկցիաներին, բայց քանի որ նա կարող է սովորեցնել միայն աստվածային ճշմարտություններ, աշխարհիկ գիտությունները կարող են հետաքրքրել նրան միայն այնքանով, որքանով առնչվում են աստվածային գիտելիքի հետ: Տվյալ դեպքում աստվածաբանության դոկտորը ելնում է աշխարհի փիլիսոփայական և գիտական ճանաչողությունից, որպեսզի հաստատի գիտությունն իր սեփական ուսումնասիրության առարկայի, այն է՝ Աստծո Խոսքի մասին:

Բնության ճանաչողությունը, որը որոշակի տեղ է զբաղեցնում քրիստոնեական դոկտորի կյանքում, ներկայանում է որպես աստվածային պատկերի հետևանքների հայեցություն, որը նախապատրաստում է աստվածային պատկերի ուսումնասիրությունը:[4]

Այսպիսով, կարող ենք ասել, որ քրիստոնեական դոկտորի համար փիլիսոփայության և գիտության ուսումնասիրությունը անհրաժեշտ է, բայց

---

[3] Жильсон Э. Избранное: Томизм. Введение в Философию Ф. Аквинского.Том1. М. 1999., ст. 8

[4] Жильсон Э. Избранное: Томизм. Введение в Философию Ф. Аквинского.Том1. М. 1999., ст 43.

որպեսզի օգտակար լինի, այն չպետք է լինի ինքնանպատակ: Թ. Աքվինացին դիմում է այդ փիլիսոփայությանը՝ նկատի ունենալով միայն այն ծառայությունները, որոնք վերջինս կարող է մատուցել քրիստոնեական իմաստությանը: Այդ պատճառով նա չի առանձնացրել այդ փիլիսոփայությունն առանձին ոլորտում և նրան անուն չի տվել, ինչն էլ իր հերթին պատճառ հանդիսացավ, որ նրա աշխատություններում փնտրեն փիլիսոփայության տարրեր՝ դուրս բերված աստվածաբանությունից: Է. Ժիլսոնը շարունակում է՝ նշելով, որ Աքվինացին երբեք չի ձգտել նման սինթեզի. դա չէր նրա՝ իբրև աստվածաբանի խնդիրը: Հետագայում այս հարցով սկսեցին զբաղվել՝ Թ. Աքվինացու փիլիսոփայության հատուկ բնույթն ընդգծելու համար,որը ստացավ քրիստոնեական փիլիսոփայություն անվանումը և որը միանգամայն ճիշտ արտահայտում է թոմիստական մտքի իմաստը: Այն լայնորեն կիրառվել է նաև XIXդ. սկզբներին և մտել նաև Լևոն XIII պապի էնցիկլիկի խորագրի մեջ:[5]

Է.Ժիլսոնը, նշելով, որ այս բնորոշումը չի պատկանում Թ. Աքվինացուն, ինչպես նաև բազմաթիվ տարակարծությունների պատճառ է հանդիսացել, թոմիզմի զուտ պատմական շարադրության մեջ խուսափում է դրա գործածությունից: «Թեպետ այս բնորոշման օրինականությունը չի սահմանափակվում որևէ դարաշրջանով, այնուհանդերձ պատմությունը կարող է գոյություն ունենալ նաև առանց այդ բնորոշման, եթե միայն մենք անձեռնամխելի ենք պահում այդ ֆորմուլայով նշանակվող իրականությունը»:[6]

Մտորելով այն մասին, թե ինչպես պետք է հասկանալ ԼևոնXIII պապի էնցիկլիկի խորագիրը (որտեղ մասնավորապես ասվում է.«Կաթոլիկյան՝ դպրոցներում հրեշտակային դոկտոր ս. Թ. Աքվինացու ոգով քրիստոնեական փիլիսոփայությունը վերածնելու նպատակով)՝է. Ժիլսոնն իր «Փիլիսոփա և աստվածաբանություն» աշխատության մեջ գրում է.«Ինչպես էլ, որ մենք մտածենք քրիստոնեական փիլիսոփայության մասին, ի սկզբանե պարզ է, որ այս անվանումն արտացոլում է փիլիսոփայության նկատմամբ առաքելական վերաբերմունքը. այն դիտվում է իբրև օգնական մարդու փրկության գործում»: Մեջբերելով Մատթ.28:16-ում Քրիստոսի խոսքերը՝ է. Ժիլսոնը շարունակում է.«Այսպիսով, «քրիստոնեական փիլիսոփայությունը» կապված է ուսուցանող եկեղեցու հեղինակության հետ: Կարելի է նույնիսկ ասել, որ այն նախ և առաջ որոշվում է այդ հեղինակությամբ, քանի որ ինքը՝ փիլիսոփայությունը, հաճախ գայթակղությունների աղբյուր է հանդիսացել»:

Այսպիսով, էնցիկլիկում խոսվում է փիլիսոփայական նպատակներով բանականության կիրառման մասին՝ պայմանով, որ բանականությունը չզրկի իրեն հավատի լույսից...Քրիստոնեական փիլիսոփայության դեպքում բանակա-

---

[5] Նույն տեղում:
[6] Նույն տեղում:

նությունը, լսելով Աստծո ձայնը, բերում է փիլիսոփայությունը հավատի և ապացուցում է գործով, որ բանական մարդն իր ըմբռնումներում և դատողություններում պետք է ենթարկվի աստվածային հեղինակությանը: Սրանից այն կողմ փիլիսոփայության հեղինակությունը չի անցնում: Այն ամենն ինչ իրենից դուրս է, գերազանցում է բանականության հնարավորությունները:Այդ գծից այն կողմ գտնվում է աստվածաբանությունը. միևնույն ժամանակ փիլիսոփայությունը դեռ կարող է նրան որոշ ծառայություններ մատուցել:Նրա օգնությամբ, օգտագործելով նրա մեթոդները՝ աստվածաբանությունը ձեռք է բերում նկարագիր, կառուցվածք և իրական գիտության ոգի...իր իրավասության սահմաններում գտնվող բոլոր հարցերում փիլիսոփայությանն իրավունք է տրվում հետևել իր սեփական մեթոդներին, կիրառել իր՝ նկզբունքները և ապացուցման մեթոդները՝ միևնույն ժամանակ դուրս չգալով աստվածային հեղինակության շրջանակներից... Այսպիսով էնցիկլիկում հիշատակված փիլիսոփայությունը պետք է հասկացվի ոչ այնքան որպես դոկտրին, որքան բանականության կիրառում կրոնական նպատակներով. այդ փիլիսոփայությունը պետք է գոյություն ունենա քրիստոնեական հավատի հետ որոշակի սիմբիոզում: «Այսպիսով,-ասվում է էնցիկլիկում,- նրանք, ովքեր փիլիսոփայությունը ծառայեցնում են հավատին, փիլիսոփայում են լավագույն ձևով...»:

Հավատի կարիքների համար և հավատի մեջ բանականության կիրառումը, որը ձեռք է բերում գիտականություն, հանդիսանում է հենց այն, ինչ կոչվում է սխոլաստիկա, նկատում է է. Ժիլսոնը:[7]

Թոմիստական փիլիսոփայությունը ոչ միայն գոյություն չունի առանց թոմիստական աստվածաբանության, այլ հաճախ հենց դրանց մեջ պետք է փնտրել Աստծո գոյության և աստվածային հատկությունների, արարչության, մարդու բնության և բարոյական կյանքի օրենքների մասին հայացքների վերջնական ձևավորումը: Նրա կողմից Արիստոտելի հայացքների ուսումնասիրությունը հետապնդում է մեկ նպատակ, այն է՝ինչքան հնարավոր է լավ նախապատրաստել մի աշխատություն, որն իր նախագաղափարում աստվածաբանական է: Ուստի կարելի է հանգել հետևյալ եզրակացությանը. թոմիստական փիլիսոփայությունը այնքան ավելի խորն է վերամշակված, որքան ավելի շատ է կապված թոմիստական աստվածաբանության հետ: Թ.Աքվինացու աստվածաբանությունը փիլիսոփայի աստվածաբանություն է, բայց նրա փիլիսոփայությունը՝ փիլիսոփայություն է քրիստոնեական սրբի: Ժամանակակից մեկնաբաններից շատերը Թ. Աքվինացուն նախ և առաջ պատկերացնում են իբրև փիլիսոփա, որը մտահոգված է նրանով, որ չխաթարվի իր փիլիսոփայության մաքրությունը՝ աստվածաբանության հետ խառնվելով: Իրականում,

---

[7] Этьен Жильсон "Философ и теология" - М., Гнозис, 1995 (перевод французского издания Etienne Gilson "Le philosophe et la theologie" - Paris, 1960). стр. 152.

սակայն, Աքվինացուն մտահոգում էր ճիշտ հակառակը: «Աստվածաբանության հանրագումարում» նրա համար խնդիրն այն չէ, որ իր փիլիսոփայության մեջ աստվածաբանական տարրեր ներմուծի՝ առանց փիլիսոփայության էությունը վնասելու,այլ, ընդհակառակը, աստվածաբանության մեջ փիլիսոփայական տարրեր ներմուծելը՝ առանց աստվածաբանությանը վնասելու:[8]

Իր «Փիլիսոփա և աստվածաբանություն» գրքում է.ժիլսոնը նշում է, որ փիլիսոփաներից, աստվածաբաններից և կրոնի պատմությունն ուսումնասիրողներից շատերը չեն համարձակվում աստվածաբանություն կոչել այն, ինչին նրանք գերադասում են տալ փիլիսոփայություն անվանումը՝ համոզված լինելով, որ «աստվածաբանություն» և «փիլիսոփայություն» հասկացությունները բացառում են միմյանց: «Եթե նրանց հավատալու լինենք,-գրում է է.ժիլսոնը,- ապա զուտ փիլիսոփայական ճշմարտությունների համար, որոնք կախված են բանականությունից, աստվածաբանության մեջ չի կարող տեղ լինել,որտեղ բոլոր դրույթները համաձայնեցվում են հավատի հետ»: Բայց այս պնդումն այնքան էլ ճիշտ չէ և հասկանալ դա կարելի է՝ փնտրելով «աստվածաբանություն» բառի իրական իմաստը՝ներառելով այնտեղ միանգամայն որոշակի հավատի և բանականության հարաբերության կոնցեպցիան: Այնուհետև է.ժիլսոնը շարունակում է՝ նշելով, որ կասկածից վեր է այն, որ աստվածաբանության ուսումնասիրության առարկան հենց այն է, ինչ տրված է Հայտնության մեջ: Իսկ Հայտնության մեջ տրված ճշմարտությունները կարող են ստացվել միայն հավատի միջոցով. յուրաքանչյուր աստվածաբանական դատողություն ելնում է հավատից և հետևաբար օրինական է միայն նրանց համար, ովքեր հավատում են: Եվ այն փաստից, որ հավատի վրա հիմնված եզրակացությունները չեն կարող պատկանել փիլիսոփայությանը, չի հետևում, որ զուտ ռացիոնալ դատողությունները չեն կարող պատկանել աստվածաբանությանը: Սխոլաստիկ աստվածաբանության բնույթն այնպիսին է, որ այն լայնորեն և ազատ դիմում է փիլիսոփայական դատողությունների օգնությանը: Աքվինացու և նրա հետևորդների կողմից առաջարկված հավատի և բանականության ներդաշնակության սկզբունքը ենթադրում է, որ հավատն ու գիտելիքը երկու տարբեր ուղիներ են Աստծո ճանաչողության պրոցեսում, որը բնական ձևով բացահայտվում է բանականության համար մատչելի արարված աշխարհի միջոցով և գերբնական ձևով՝ Հայտնության միջոցով, աստվածային խոսքով: Ռացիոնալ ճանաչողությունն արժեքավոր է, քանի որ այն թույլ է տալիս հասկանալ Հայտնության ճշմարտությունները: Բայց կան նաև դոգմաներ, որոնց ըմբռնման ընթացքում էլ ի հայտ է գալիս փիլիսոփայության և հատկապես գիտության սահմանափակությունը: Այդպիսիք են, օրինակ,

---

[8] Жильсон Э. Избранное: Томизм. Введение в Философию Ф. Аквинского.Том1. М. 1999., ст.16

Մարմնավորման,Հարության, Աստվածային Երրորդության դոգմաները, որոնց մենք հասու ենք դառնում բացառապես Հայտնության միջոցով:Այս իմաստով աստվածաբանությունը հանդիսանում է միաժամանակ և մարդուն հասանելի ռացիոնալ գիտելիքի բարձրակետ և ոչ ռացիոնալ գիտելիք, որը նույնական է հավատին: Միայն հաշվի առնելով հավատն իբրև առաքինություն, շարունակում է է. Ժիլսոնը,որը աստվածային բնության մաս է հանդիսանում, կարելի է հասկանալ աստվածաբանություն հասկացության թոմիստական իմաստը և պարզաբանել այն այլ գիտությունների շարքից դուրս դնելու անհրաժեշտությունը:Եվ հետո հավատի աստվածային բնույթն, իբրև առաքինություն, որը ճանապարհ է բացում աստվածային ճանաչողության համար, աստվածաբանությանը թույլ է տալիս փոխառել և ասիմիլացնել փիլիսոփայության և այլ գիտությունների տարրեր: Երբ Թ. Աքվինացուն հանդիմանում են՝ ասելով, որ նա խառնում է փիլիսոփայության ջուրը սուրբ գրության գինու հետ, նա պատասխանում է՝ ասելով, որ աստվածաբանությունը խառնուրդ չէ, այն բաղկացած չէ տարաբնույթ բաղադրիչներից, որոնց մի մասը պատկանում է փիլիսոփայությանը, իսկ մյուս մասը՝ հավատին, Աստծո Խոսքին: Աստվածաբանության մեջ բոլոր բաղադրիչները միատեսակ են՝անկախ նրանց ծագման տարբերությունից: Նրանք, ովքեր դիմում են փիլիսոփայանը՝ հօգուտ Ա. Գրության, Հայտնության և փիլիսոփայական փաստարկները ծառայեցնում են հավատին, չեն խառնում ջուրը գինու հետ. նրանք ջուրը վերածում են գինու:[9] Փիլիսոփայությունն արհամարհող աստվածաբանների համար այս խնդիրը չեր առաջանում:Համոզված լինելով, որ մարդկային ոչինչ չի կարող ավելացվել Հայտնության սկզբնական բովանդակությանը՝ նրանք հրապուրվում էին այն գաղափարով, թե այդպիսով պահպանում են հարգանք Սրբազան Գիտելիքի միասնության նկատմամբ: Մինչդեռ Աքվինացու համար խնդիր էր հանդիսանում այն թե ինչպես կարելի է փիլիսոփայություն ներմուծել սրբազան գիտելիքի մեջ՝ միևնույն ժամանակ անխախտ պահելով և փիլիսոփայության, և աստվածաբանության էությունն ու ամբողջականությունը:Այլ կերպ ասած՝ ինչպես Հայտնության գիտության մեջ ներմուծել բանականության գիտությունը՝ չխախտելով Հայտնության մաքրությունը և միաժամանակ պահպանելով բանականության մաքրությունը:[10]

Բայց ինչպես կարող է հայտնությունն իր մեջ միավորել զուտ ռացիոնալ դատողություններ՝ չկորցնելով իր էությունը և չփոխելով վերջինիս էությունը: Փորձելով պարզաբանել այս հարցը՝ իր «Աստվածաբանության հանրագումարում» Թ. Աքվինացին անում է հետևյալ համեմատությունը. Արիս-

---

[9] Этьен Жильсон "Философ и теология" - М., Гнозис, 1995 (перевод французского издания Etienne Gilson "Le philosophe et la theologie" - Paris, 1960). стр. 77-78.

[10] Жильсон Э. Избранное: Томизм. Введение в Философию ф. Аквинского.Том1. М. 1999., ст.16.

տոտելի հոգեբանության մեջ, որին հետևում է Աքվինացին, տարբերակվում են զգացողությունները այս բառի ընդհանուր իմաստով (տեսողություն, լսողություն), որոնցից յուրաքանչյուրին համապատասխանում է մեկ ֆունկցիա և ընդհանուր զգացողությունը. նկատի է առնվում ներքին զգացողությունը,որի ֆունկցիան հանդիսանում է արտաքին զգացողությունների համեմատությունը, դրանց տարբերակումը և վերջին հաշվով՝ գնահատումը: Տեսողությունը, օրինակ, չի կարող լսել. նրա «ուշադրությունն» ամբողջությամբ զբաղեցնում է միայն գույնը և պատկերը: Ընդհանուր զգացողությունը, ընդհակառակը, գիտի այդ մասին. նրա շնորհիվ մենք գիտենք, որ լսելը նույնը չէ, ինչ տեսնելը և որ լսել կարող է միայն ականջը, իսկ աչքը՝ երբեք, փոխարենը՝ միայն նա կարող է տեսնել: Այսպիսով, մենք ունենք զգացողություն, որը, չկորցնելով իր ամբողջականությունը, կարող է դիտարկել տարբեր ծագում ունեցող բազմաքանակ տվյալներ: Թեպետ ընդհանուր զգացողությունն ինքնուրույն չի ստանում այդ տվյալները, բայց և այնպես այն ի վիճակի է դրանք ընկալել, տարբերակել և դրանց մասին դատողություններ անել: Ընդհանուր զգացողությունը Աքվինացին նմանեցնում է աստվածաբանությանը, իսկ փիլիսոփայական դիսցիպլինները՝ մյուս բոլոր զգացողություններին՝ նշելով. որ ունակությունները կամ ցածրագույն գիտությունները տարբերակվում են իրենց ճանաչողության առարկայով, իսկ միասին վերցրած՝ դրանք ենթարկվում են զգալու ընդհանուր ունակությանը, այլ խոսքով՝ միակ և բարձրագույն գիտությանը:

Այսպիսով, Աքվինացու աստվածաբանությունը կարող է կիրառել տերբեր ծագում ունեցող փիլիսոփայական գիտելիքներ, բայց այն (աստվածաբանությունը) չի հանգեցվում դրանց: Աստվածաբանությունն ընտրում և լրացնում է դրանք:[11] Աքվինացու ձեռքբերումը միայն խնդիրն առաջադրելու մեջ չէ:Դեռ նրանից առաջ էլ աստվածաբանները հեղեղել էին սրբազան գիտությունը փիլիսոփայական դոկտրինների առատությամբ, ինչպես, օրինակ, Ալբերտ Մեծը, որի էնցիկլոպեդիկ աստվածաբանությունը չէր անտեսում ոչ մի գիտություն՝ իբրև նրա էությանը կամ կառույցին խորթ երևույթ: Աքվինացու ներդրումն այս ընդհանուր շարժման մեջ մտածողական ջանքն է, բանականության աշխատանքը, որը նա գործադրում է՝ մարդկային ճանաչողությունը, գիտելիքները աստվածաբանության մեջ ներդնելու,նրան ծառայեցնելու համար: Աստվածաբանական կառույցի մեջ ներդրված մարդկային ճանաչողությունը դառնում է այսպիսով աստվածային ուսմունքի մաս՝ իր հերթին հիմնված հավատի վրա:

---

[11] "Электронная библиотека по философии - http://filosof.historic.ru"